

# ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

Ծ Խ Ա Խ Ո Տ

Ն Ր Ա Վ Ն Ա Ս Ն Ե Ր Ը Ե Ւ Օ Գ Ո Ւ Տ Ն Ե Ր Ը

Շատեր ծխախոտի վնասների մասին խօսելիս, չափազանցութեան են դիմում և նրա վնասները համեմատում են ալկոլի յառաջացրած վնասների հետ։ Այս շատ սխալ է, որ ծխախոտի չափազանց գործածութիւնը անհասին վնասներ տալիս է, սակայն այդ վնասները չէ կարելի համեմատել ալկոլի պատճառած վնասների հետ, որովհետեւ, ինչպէս յայտնեցինք, ծխախոտի վնասակար հետեանքը տեսնուում է միմիայն անհասին վրայ, ալկոլի նման սերունդների վրայ չէ ազդում, նա չէ մղում մարդասպանութեան, յիմարութեան, թշուառութեան, բարոյական անկման և բնաւորութեան ստորևացման։ Վերջապէս, ծխախոտը վնասում է ծխողին ֆիզիկականը միայն, ծխողը ուրիշներին չարիք չէ պատճառում։ ծխախոտից առաջացած չարիքները մասնաւոր են, իսկ ալկոլից առաջացածները ընդհանուր, համայնական։

Ծխախոտի և ալկոլի մէջ մի ուրիշ տարրերութիւն էլ կայ, այն է, որ ծխախոտի չափաւոր գործածութիւնից վնասներ առաջ չեն գալիս, իսկ ալկոլի չափաւոր գործածութիւնից միշտ վնասներ առաջ գալիս են—ալկոլականութիւնն...

Լաւ է, որ մարդու երբէք չը սովորի ծխել, բայց ծխողներին էլ խստիւ արգելելու չենք, միայն խրատելու ենք, որ չափաւորութիւնից չի հեռանան, 20-րդ զարում ապրող մարդը, քաղաքակրթուած մարդը՝ գոյութեան կաւում՝ տենդային գործնէութեան հետեանքով լարուած և գրգռուած նեարդներ ունի, նեարդային այդ գրգռուած դրութիւնը կարող է ինքն ըստ ինքեան ծանր հետեանքներ առաջ բերել, ուստի պէտք ունի, կարիք է զգում մի այնպիսի բանի, որը կարողանայ հանգարտե-

յնել և ամոքել այդ գրութիւնը. և այդ մոքական ոյժը զանում է կաֆիխ, թէյի, ծխախոսի, ալկոլի, մօրֆինի, տփիոնի, և այլնի մէջ:

Ուրեմն, այս պարագայում, հարկաւոր է երկու չարփներից փոքրագոյնը ընտրել, այն է ընտրել կաֆիխ, թէյը կամ ծխախոսը, և մերժել ալկոլը, մօրֆինը և ափիոնը, որոնց բացարձակ վեամները դիտնականորէն և փորձառական կերպով հաստատուած են:

Ենչպէս «Մուրիխ» № 2-ում (էջ 242) գրուած էր, ծխախոսը սուաջին անգամ երեսում է Սպանիայում. ծխախոսի բուն հայրենիքը հարաւային Ամերիկան է. երբոր եւրոպացիք Ամերիկան գտան, ճնդիկները (բնիկ) արդէն ծխախոս գործ էին ածում: Կօրտէզ 1518 թուին ծխախոսի սերմեր ուղարկած է Կարոլոս հինգերորդին. Սպանիացիք առաջին անգամ ծխախոսը գտան Մէքսիկայի ծոցում Տաբագո կոչուած կղզու վրայ, և հերոսացիք այդ կղզու անունով մէրտեցին այդ բոյած՝ Տաբակօ կամ Տաբա: 1860 թուին Պօրտուգալի Փրանսական Ժան Նիկօս զեսպանի միջոցով Ֆրանսա ներմուծուեց, որտեղ մօդա զարձաւ Ֆրանսայի կաթէրին զը Մէդիչ թագուհու և Փրանսական առաջիկայ առանաւ Ֆրանսուա զը Լօրէնի չնորհիւ. այն ժամանակ ի պատիւ դարձին Նիկոտիանա, դեսպանի խոս և ի պատիւ թագուհուն նուիրական կամ բազուի խոս անուանեցին:

1624 թուին կարգինալ Բիշլիէօի նախարարութեամ օրով ծխախոսի մշակութիւնը Ֆրանսա մտաւ և լուի Ժ. բոլոր գեղագաճաներին արտօնուց ծախել. իսկ ընդհակառակն Անգլիոյ Ժակ Ա. թագաւորը 1604 թուին նրա գործածութիւնը իր երկրի սահմաններում արգելած էր, ծխախոսը զարշահոտ և անմոքուր համարելով: Եղիսաբէթ թագուհին նրա մշակութիւնը արգելեց, յամառ ծխողների դէմ ծանր պատիմներ դրեց և վոճառողների զոյքերը տէրութեան գրաւեց: 1624 թուին Իւրբէն և. պապը պաշտամունքի միջոցում քթախոս քաշող քահանաներին բանաղբեց: Պարսկաստանում հալածումը աւելի խիստ էր. Ամիւրատ Դ. քթախոս քաշողների քիթը և ըթունքները կորում էր: 1674 թուին Փրանսիական կառավարութիւնը աւելի հեռատես, մտածնց ծխախոսի հկամուտը տէրութեան յառկացնել, նրա վաճառումը տէրութեան սեփականացնելով, այս մտածումը 1810 թուին մենաշնորհի (բէժի) սկզբնաւորութիւնն եղաւ, կառավարութեան տարեկան 25 միլիոն ֆրանկ հասոյթ գոյացնելով. ծխախոսը այսօր ֆրանսական դանձին տարեկան 400 միլիոն ֆրանկ զուտ հասոյթ է բերում:

Ծխախոտի մշակումը և վաճառումը բոլոր երկիրներում ազատ է, բայց Անգլիայից, որտեղ մշակումը արդելուած է, իսկ վաճառումը և պատրաստելը ազատ է:

Գրեթէ 50 տեսակ ծխախոտի տունկ կայ, սակայն գլխաւորաբար երկու տեսակներն են մշակում. առաջինը հասարակ տեսակն է, 60—90 սանտիմէտր բարձրութեամբ, հաւիթաձե, կոթնաւոր և ծայրը բութ տերեներով, որոնց գոյնը մութ կանաչ է և երկայնութիւնը 25—30 սանտիմէտր, ծաղիկները կանանչկեկ գեղին գոյնի են: Երկրորդ տեսակը աւելի ազնիւ և ընտիր է, 1—2 մէտր բարձրութեամբ, ունի երկայնաձե, ծայրը սուր և միւսից աւելի երկայն գեղեցիկ գեղնօրակ կանաչագոյն տերեներ, ծաղիկները մեծկակ և վարդագոյն են:

Ծխախոտը երեք կերպ են գործածում՝ ծամելով, քթախոտ քաշելով և ծխելով:

1.—Ծամել.—Ծխախոտի այս կերպ գործածութիւնը եւրոպացիների և արաբացիների մէջ ընդհանրացած է. ծխախոտի տերեների կտորները բերանում ծամելով ջուրը կուլ են տալիս, այս միջոցով են զգում և վայելում ծխախոտից ակնկալուած հաճոյքը: Ծխախոտի այս կերպ գործածութիւնը զինուորներին, մանաւանդ ծովային զինուորներին յատուկ է, սակայն նոյնպէս երեւելի անձնաւորութիւններ յամառ ծամողներ են եղած, Ստրազրուրդի պրօֆէսէօր Ֆօրմէն և հոչակաւոր Մալրուրդ ծամում էին. մի կին, եթէ կը հածիք մի իշխանուհի՝ արուեստի և գիտութեան պաշտան Անգլիոյ Կարոլինը՝ ծխախոտը ծամելով միծ հաճոյք էր զգում:

Ծխախոտը ծամելու անպատճեն վարժութիւնը բերնին մի խիստ անախորժ հոտ է տալիս, ատամները լենդերից բաժանում է, գեղնեցնում և փատեցնում: Մարսիլիացի գօկտ, Ֆանտոնի հետ աւելացնենք նաև, որ ծխախոտ ծամելը բերնի և կոկորդի բորբոքում է պատճառում, այս բորբոքումը յաճախ նշադեզի և քմքի թաղանթի վրայ է տարածուում, որանք ուռչելով կարող են լսողութեան վնասել: Ծամելու չափազանցութիւնը աղիքի, բերնի, կոկորդի, աչքի և ականջի հիւանդութեանց պատճառ է զառնում:

2.—Քրախոտ.—Քթախոտը, ասում է պրօֆէսօր Գիւրլէր, քթի վրայ երկու կերպ զգայնութիւն է պատճառում, հոտառական և շօշափական. այս զգայնութիւնը քթի ներքին մասը ծածկող Շնայդէրի թաղանթը գրգուրով, փոնդտուք և չափաղանց ինչիք յառաջ է բերում: Քթախոտը՝ քթի ծակների մէջ մնալով, ապշութեան, քնասիրութեան և նոյն իսկ ամենածանր դէպքերի տեղիք է տալիս. քթախոտի վնասակարութիւնը աւե-

լի է շեշտւում, եթէ փոշին անցնում է կոկորդը և կուլ է արբ-  
ւում։ Փոքր չափով քաշուած քթախոսա՞՝ ուղեղը գրգռելով  
մտային կարողութիւնը աւելի է փայլեցնում և սրում։

Քթախոսի գործածութիւնը մի անախօրժ գարշահոտու-  
թիւն է տալիս, գործածողները եթէ բնականից անմաքուր և  
անհոգ լինեն, բացի զգուելի հոտից, մի անտանելի տեսք են  
ունենում. այսու հանդերձ բազմաթիւ քթախոտ քաշողներ կան,  
բաւականանանք միայն յիշելով Մեծն Ֆրիդէրիքը և Նապոլէոն  
Առաջինը, որտեղ քթախոտ քաշողներ էին։

3. — Ծխել. — Ծխելու սովորութիւնը աւելի է ընդհանրացած.  
իսկ ծամելը պակասած է և քթախոտ քաշելը զրեթէ մոռաց-  
ուելու վրայ է։ Ծխելու չափաղանցութիւնը առաջ է բերում  
մի յամրազդեցիկ թունաւորութիւն, մարսողութեան խանդա-  
րում, ստամոքսի հիւանդութիւն, սիրտխառնուք, անախորժա-  
կութիւն, նիհարութիւն, սրտի անկանոն բարախում, դժուա-  
րաշնչութիւն, մոքի թմրութիւն, յիշողութեան նուազում, տե-  
սողութեան տկարացում, առնական կարողութեան մի զգալի  
պակասութիւն։

Կատաղի ծխողները ունեն սև ատամներ, գրգռուած լեն-  
գեր, խոչափողի բորբոքում, որ կոչում է ծխողների խոչափո-  
ղատապ. վերջապէս շրթունքների վրայ տեսնուած վնասակար  
ուռոյցները (կամկրօթա) վերագրուում են ծխելու. սովորութեան.  
թէկ գօկտ. Պիէտրա Սանտա չը ծխող կանանց և մանուկների  
շրթունքների վրայ էլ նկատած է։

Ծխախոսի վեասակար յատկութիւնը առաջ է գալիս նրա  
պարունակած և նիկոտին կոչուած խիստ ազդու սոսկալի թոյ-  
նից, եթէ այս թոյնից 5—6 կաթիլ լեզուի վրայ զրուի, մահը  
անմիջական է լինում։ 1851 թուին Բօկարմէ կոմսը իր քեռայր  
Գիւտավ Ֆունին նիկոտինով է թունաւորած։ Նոյնպէս, 1861  
թուին Շէրբուրդի զինուորական հիւանդանոցում պատահած  
անձնասապանութեան մասին գօկտ. Ֆօնսազրիֆի և Բէմուի  
կողմից գրուած տեղեկագիրը, լինքնասապանութեան նիկոտինով  
տեղի ունեցած լինելն է հաստատում։ լինքնասապանի գրպանում  
մի քանի կաթիլ նիկոտին պարունակող մի փոքրիկ սրուակ է  
զանուած։

Պարզ ծխախոտը մորթի վրայ գնելիս ծանր վտանգներ ա-  
ռաջ եկած լինելը յիշում է գօկտ. Գալավարէն Գագէս դէ զ'օ-  
պիտօյի մէջ։

Վերջապէս, ծխախոսի պարունակած նիկոտին նիւթին  
մի սարսափելի և մահացնող ազգեցիկ թոյն լինելը գօկտ. Բա-

բէլի կաղմից կատարելապէս ուսումնասիրուած և ամենալուրջ փորձերով ստուգուած է:

Ծխախոտը, ուրիշ թոյների նման, երեխաների վրայ աւելի է ազդում, որովհետեւ նրանց նեարդային սիստեմը շատ փափուկ, շատ դիւրագրգիտ և ավելի է:

Մի ամերիկացի բժիշկ գլորոցական երեխաների վրայ երկար փորձեր կատարելով մի կատարեալ վիճակաղութիւն էր կազմած, ավանու որ այդ գրուածքը կորցրած լինելով, համոզիչ թռւանշաններ չը պիտի կարողանանք մէջ բերել, միայն շատ լաւ կերպավ յիշում ենք, այդ բժիշկը հաստատած էր իր փորձերով, որ ծխող աշակերտների կուրծքի տարածութեան չափերը պակասում են, հասակի բարձրութիւնից կորցնում են և նրանց գիգիկական աճումը և գարդացումը յետ է մնում:

Դոկտ. Մանդէլզօն ծխախոտի մարսողական և չնչառական գործարանների վրայ ունեցած ազդեցութիւնը գիտնալու համար, Պետակրուրդի «Զինուորական բժշկական ակադէմիայի» և «Արուեստագիտական գոլրոցի» ուսանողների վրայ փորձեր է կատարած:

Ուսանողներին հինգ հարցեր է առաջարկած. 1—Տարիք; 2—Ռբան ժամանակից ի վեր ծխում էք; 3—Օրական ռիբան սիգար կամ սիգարնիկներ; 4—Ծուլիս կուլ տալիս էք; 5—Ցածախ նեղութւմ էք մարսողական կամ չնչառական խանգարումներից:

1071 ուսանողներ՝ 556-ը Բժշկական ակադէմիայից և 515-ը Արուեստագիտական գոլրոցից՝ սպատասիանած են: Առաջինները սալիս էին 104-ին 54,66 տոկոս ծխողներ և երկրորդները 47,18:

Ուրեմն առաջին նշանակելիք կէտք այն է, որ ծխողների թիւը շատ աւելի մեծ է բժշկական ուսանողների մէջ քան արուեստագիտական գոլրոցի աշակերտների մէջ:

Սակայն, ընդհակառակը, արուեստագիտական գոլրոցի աշակերտը բժշկական ուսանողից աւելի է ծխում: Առաջինը օրական միջին չափով 22, 28 սիգարնիկներ է ծխում, իսկ վերջինը 19, 64 սիգարնիկ:

Ծխողներից 100-ին 16,09 տոկոսը չնչառական գործարանների հիւանդութիւններով էին տառապում. չը ծխողների մէջ այդ առկուսը 10,69 էք: Մարսողական գործարանների խանգարումներում համեմատութիւնը՝ առաջինների համար 11,88 է, իսկ վերջինների համար 9,92:

Ըստհանուր կերպով խօսելով, հիւանդների թիւը ծխող-

Ների համար 100-ին 36,74 է, իսկ չը ծխողների համար 100-ին 23,83:

Ծխողների մի երրորդ մասը 16 տարեկանից առաջ ծխել են սկսել, միւս երկու երրորդ մասը 16 տարեկանից յևոյ Առաջինները երկրորդներից աւելի շատ հիւանդներ են տալիս, 100-ին 45,83, ընդգեմ 32,71-ի:

Մանդելզօն «Ծխախոսի չափազանցութեան» գէմ ընկերութեան կողմից պատուոյ մնջալի է արժանացած, իր այս աշխատութեան համար, որի համառօտութիւնը ներկայացրինք մեր ընթերցողներին:

Նմանօրինակ մի փորձ 1893 թուին Բօրբիցնի կատարած է «Արբօֆի բժշկական ֆակուլտէի» ուսանողների շրջանում. նրա փորձերից հետեւում է, որ ծխախոսի գործածութիւնը միշտ աւելի տարածուած է ուսանողների մէջ, 100-ին 66,40 համեմատութեամբ Սառուգուած է, որ ծխախոսը շատ աւելի մեծ ծաւալ է գտած անստօմիական աշխատութիւններին հետեւող ուսանողների մէջ. սրա պատճառը յայտնի է, եթէ նկատի ունենաք այդ աշխատութեան ծանրութիւնը և դիակների գարշահոտութիւնը:

Մեծագոյն մասը սկսել են ծխել 16—18 տարեկանից. 12 տարեկանից առաջ և 20 տարեկանից յետոյ ծխողների թիւը շատ քիչ է: Փօքրիկ մի հաշիւ անելով, ծխախոսի համար այդ ուսանողների վատնած գումարը 12,000 ռուբլի է գտել. պէտք է նկատի ունենալ մանաւանդ, որ Ռուսաստանի ուսանողները մեծ մասամբ, մանաւանդ բժշկական ուսանողները, չքաւորի զաւակներ են և մի սիդար ունենալու համար յաճախ հայից են զրկւում...

Այս թուերը՝ Ռուսաստանում ընդհանուր գործածուած ծխախոսի հետ համեմատելով կը դմտենք, որ ուսանողները՝ մնացեալ ազգաբնակութիւնից միջին կերպով տասն անգամ աւելի ծխախոս են գործածում. պէտք է յիշել, որ Ռուսաստանի ժողովուրդը՝ ուրիշ եւրոպական տէրութիւնների հետ բազդատած, աւելի քիչ ծխախոտ է գործածում. այս տեսակի տից Ռուսաստանը վերջին տեղն է բռնում:

547 ուսանողներից միայն 39 ծուխը կուլ չէին տալիս, սրանց մարսողական կամ չնչառական գործարանների խանդարումները չը ծխողների նման շատ հազուադէպ է եղած, 100-ին 1,8: Ուրեմն, ծխախոսի գործածութեան մէջ եթէ ծուխը կուլ չի տրւում, համեմատաբար շատ անվտանգ է լինում:

Հեղինակը՝ այս քննութիւնների արդիւնքը՝ «Ռուսական հանրային առողջապահական ընկերութեան» նիստերից մէկում

հազորդելով։ Ընկերութիւնից իննգրած է ընդունել հետևեալ առաջարկները, ծխախոտի չափազանց տարածման դէմ հակազդելու և մանաւանդ չը ծխողներին պահպանելու համար։

1) Յանկալի էր, որ գպրոցների աշակերտներին հասկացնէին ծխախոտի վտանգները, մանաւանդ անձնական օրինակով։

2) Ծխախոտի գործածութեան տարածմանը նպաստող բոլոր հասպամանքները պէտք է հարուածեն։

3) Յանկալի էր, որ ծխելը արգելուէր բոլոր հասարական հաւաքման վայրերում։

Նորվէգիայում մի օրինագիծ է ներկայացուած, 16 տարեկանից վար եղող բոլոր անձերին բացարձակապէս ծխախոտ չը վաճառել։ 16 տարեկանից նուազ եղողներին չը պիտի կարողանան աշխատեցնել ծխախոտի գործարաններում։ Պոլիցիան իրաւունք պիտի ունենայ հասարա՛խութեան մէջ երիտասարդ ծխողների ձեռքից խելել սիգարը, ծխախոտը։ Այս օրէնքի հակառակ վարուողները պատժւում են 100-ին 200 կուրսն տուղանք վճարելով։

Նմանօրինակ միջոցների են դիմած նաև Միացեալ-Նահանգներից շատերը, Երիտասարդ սերնդին ծխախոտ վաճառելու արգելքը 33 նահանգներում գոյութիւն ունի։ Նահանգների մնե մասամբ տարեկի սահմանը 16 տարեկան է որոշուած, մի երկուում 14, իսկ մի քանիսում մինչև անգամ 21։

Արգելումը հիմնուած է այն նկատողութեան վրայ, որ երիտասարդ սերնդի համար ծխախոտի գործածութիւնը բաւականին աղէտաբեր է, հետևաբար, այս արգելումը, ոչ միայն անհատին, այլ և տէրութեան շահն էլ է պահանջում։

Նիւ Եօրգում այս օրէնքի հակառակ վարուող ծխավաճառները 50 դոլար տուգանքի են դատապարտում։ ծխավաճառները միւնոյն ժամանակ գպրոցից կամ եկեղեցուց 250 քայլ հեռու միայն իրաւունք ունեն ծխախոտ վաճառելու։

Իսկ Զիկագոյում հակառակ ընթացք ունեցողները պատըււում են 50-ից 200 դոլար տուգանք վճարելով, կրկնողութեան դէպըւում, իւրաքանչիւր օրուայ համար պարտաւոր են վճարել 25 դոլար աւելի։

Ուրեմն, ինչպէս երեւում է, ընդհանուր կարծիքը այն է, որ ծխախոտը անչափահասներին չափազանցօրէն վնասում է, նրանց բացարձակապէս արգելել է հարկաւոր նոյն չափով չէ վնասում չափահասներին, սրանք էլ են վնասում, եթէ չափազանց ծխում են, բայց ոչ այնքան խորին կերպով, որքան վնասում են անչափահասները, իրանց օրգանիզմի կատարելապէս չի կատարելապործուած լինելուն պատճառով։

եթէ ստոյգ է, որ չափազանց ծխելը առողջութեան շատ է վնասակար, սակայն սրա փոխարէն պրօֆէսէօր Ժէրմէն-Սէր հետ կրկնում ենք թէ՝ չափաւոր ծխելը առաջ է բերում մի ուղեղային դորձնէութիւն և դիւրացնում է աշխատութիւնը։ և դօկտ. Վիրու հետ կ'ատենք թէ՝ «Ուզեղի գործնէութիւնը բազմապատկում է, ձանձրոյթը փարատում և երևակայութիւնը սրում»։ Առողջաբանական կարերը դրուածքների հեղինակ Միշէլ Լէվի ասում է. «Այսպէս ծխախոտը բարոյական նորոգիչ պատոյն է բարձրանում, այդ պատճառով պէտք է յարգել այն, ոչ միայն քիմիական հիմնակէտով, այլ բարոյական տեսակէտով, որ մարդկային առողջապահութեան մէջ մի կարեոր զեր է կատարում»։

Հոչակաւոր առողջաբան պրօֆէսէօր Բուշարդայի հետ եղարակացնում ենք. «Ծխախոտը բացարձակ քննուադատող չը լինենք, որովհետեւ այսպիսի վիճակներում նրա չափաւոր զործածութիւնը ոչ ոք կը պարաւէ. զործաւորը օրուայ ծանր աշխատանքներից յետոյ մէկ երկու սիգար ծխելու համար իր բնակարանը մտնելով մեծ երջանկութիւն է զգում. ծխախոտը բացողիկ և նաւային զօրքերին արգելել չը պիտի համարձակեն, ձանձրոյթը մի այնպիսի չարիք է, որ ծովային և ցամաքային զօրքը հայրենակարօտութեան (nostalgie) կարող է առաջնորդել. այս պարագայում ծխախոտը մի կարեոր դարման է, որի բարերար ազդեցութիւնը ոչ ոք կ'ուրանայ. Ծերունին, որ ծերութեան ձանձրոյթը բեռոցած է, իր մխիթարութիւնը սիգարին մէջ է գտնում, քաղցր և հաճելի մի սովորութիւն, որի զրկումը կերակուրների զրկանքից աւելի ծանր է նստում. մի հիւանդի համար կեանքի միայնող կապն է, ապաքինման մէջ առաջին հաճոյքը ծխելն է»։

Մտաւորական ծանր աշխատութիւն ունեցողների համար սիգարը իրանց յոգնածութիւնը անցունելու միակ միջոցն է, ամեն զրող և կարդացող ծխախոտի այս ամօքիչ և սփոփիչ ազդեցութիւնը վայելած են և վայելում են, մանաւանդ իրանց մտքի յօգնածութիւնը էլ աւելի կը փարատեն, եթէ սիգարին միացնեն մի բաժակ թէյ կամ սուրճ..., թէյը կամ սուրճը ծխախոտի թմրեցնող ներդործութիւնը անհետացնում է։

Աւելացնենք նաև, որ եթէ Գէօթէ չէ ընդունում հանճարեղ մարդկանց ծխելը, ընդհակառակ Բակօն, Լոկ, Քանտ, Նէվուօն, Միլտօն, Էդիսըն, Վուլլի Սկոտ, Բայրըն, Ժիւլ Ֆավր, Գամբէտա, Էմիլ Օժիէ, Ժիւլ Միմօն, Կարօ, Օկտավ Ֆէոյէ, Սարդու, զը Լէսէպս, Դիւկան, Կարօ, Գարնիէ և սրանց հետ ուրիշ ֆրան-

սիազի գրագէտներ, հոչակաւոր նկարիչներ, ճարտար արձանագործներ, առանց հաշուելու զրկթէ բոլոր համբաւաւոր բժիշկները, ինչպէս, Թօրէն, Գաւարէ, Բէկլար, Վիւլպիան, Շարկօ, Ռիկօր, Սէ, Տրէլա և այլք ծխողներ էին և են:

Ծխողների համար մի քանի խորհուրդներ տալ աւելորդ չենք համարում, թէ ծխելու հաճոյքից չի զրկելու և թէ նրա վասակար ներգործութիւնը մեղմացնելու համար,

Ծխողները պարտաւոր են ծխափողով ծխել. ծխափողը յաճախ փոխել կամ մաքրել, քիչ աղնիւ և չոր տեսակից ծխել, ծուխը ներս չի քաշել ու կուլ չի տալ, յաճախ թքնել և ջրով բերանը լուալ. ննջասենեակում և բազմամարդ խուցերում երբէք չը ծխել, վերջապէս ընդարձակ և բացօղեայ տեղերում ծխել, բամբակով լցուած ծուխքաշներ դործածել և բամբակը շուշ շուտ փոխել:

Դոկտ. Կ. Յ. ՓԱՇԱՅՑԵԱՆՑ